Երևանի Պոլիտեխնիկական Ինստիտուտ՝ Կարլ Մարքսի անվան

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

—▲—

Эриванский Политехнический Институт им. Карла Маркса

СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ԵՐԵՎԱՆ 1936 ЭРИВАНЬ

:691

Երևանի Պոլիտեխնիկական Ինստիտուտ՝ Կարլ Մարքսի անվան

082
Ե-81
ՄՍՄԻՔՎՍՄ է 1981 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

—Ա—

Эриванский Политехнический Институт им. Карла Маркса

СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ

4012 430
Ա 17122

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ԵՐԵՎԱՆ 1936 ЭРИВАНЬ

Պատ. խմբագիր՝ Հ. Բաբաջանյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան
Լեզվ. խմբագիր՝ Հ. Պետրոսյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավլիտ 2006. Պատվեր 95. Հրատ. 3598. Տիրաժ 1000.

Հանձնված է արտադրության 10 փետրվարի 1936.
Ստորագրված է տպագրության 28 փետրվարի 1936.

Պետհրատի տպարան, Երևան, II Դումայի, 4.

Ինժ. Դ. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Մեքենայագիտ. յեվ մեխանիզաց. ամբիոնի վարիչ

ՈՌԻ ՅԵՎ ՋՐԱՅԻՆ ՇՈԳՈՒ ԽԱՌՆՈՒՐԴՈՎ ԲԱՆՈՂ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Ժամանակակից շոգեմեքենան և շոգետուրբինը կապված են շոգեկաթսայի հետ, որ ծառայում է շոգի պատրաստելու համար և որի մեջ վառելիքի արտադրած ջերմության մի զգալի մասը՝ 20%—25%-ն անոգուտ կորչում է, բաց թողնվելով մեծ մասամբ՝ ծխանից դեպի մթնոլորտը, առանց մասնակցելու մեքենայի մեջ տեղի ունեցող աշխատանքային պրոցեսին։

Սակայն այդորինակ ջերմային կորուստները կարելի յե կանխել, եթե գուտ ջրային շոգու փոխարեն իբրև յեռանդակիր նյութ կիրառենք ոդի և ջրային շոգու խառնուրդը, որով հնարավոր կլինի վորոշ չափով բարձրացնել մեքենայի ջերմային արդյունավետ գործողության գործակիցը։

Ոդի և ջրային շոգու այս խառնուրդը պատրաստվում է մի հատուկ կաթսայի մեջ, ուր համապատասխան ճնշման տակ մտցվում են տեղծված ոդ և վառելիք (հեղուկ, պինդ կամ գազային վիճակում)։ Կաթսայի մեջ տեղի յե ունենում այրում անփոփոխ ճնշման տակ, և այրման գազերի մեջ շարունակ ջուր և սրսկվում՝ տաքացրած մինչև շոգիացման աստիճան և ավելի բարձր, նոսր, փոշիացրած վիճակում. փոշիացումը տեղի յե ունենում անփոփոխ ճնշման տակ (շնորհիվ այրման գազերի բարձր բարեխառնության) և նույնիսկ գերատաքացվում է մինչև ցանկացած ջերմաստիճանը։ Այսպիսով կաթսայի մեջ ստացվում է ոդի և շոգու մի խառնուրդ, ավելի ճիշտ ասած՝ այրման գազերի և ջրային շոգու խառնուրդ, վորոշ ճնշման տակ, վորն իբրև յեռանդակիր նյութ տարվելով մխոցավոր շոգեմեքենայի կամ տուրբինի մեջ՝ կարողանում է նրանց բանեցնել և ջերմային էներգիան վերածել մեխանիկական աշխատանքի։

Այսպիսի խառնուրդով բանող մեքենաները, գուտ ջրային շոգիով բանող շոգեմեքենաներից և շոգետուրբիններից զանազանելու համար, կարելի յե անվանել ոդաշոգեմեքենա և ոդաշոգետուրբին, ինչպես և կաթսան պետք է անվանել ոդաշոգեկաթսա (նկար 1)։

Այս խառնուրդով կարող են բանել սովորական բացփուք շոգեմեքենան (առանց կոնդենսացիայի), ինչպես և սովորական շոգետուրբինը (նույնպես առանց կոնդենսացիայի)՝ ամենևին պետք չունենալով վորևե էական փոփոխություն մտցնելու իրանց կառուցվածքի

մեջ։ Այնպես վոր կարելի յե ասել՝ ոդաշոգեմեքենան և ոդաշոգետուրբինը նույն կառուցվածքն ունեն, ինչ վոր սովորական բացվուք շոգեմեքենան և շոգետուրբինը, միայն այն տարբերությամբ, վոր առաջինները անհրաժեշտ է ունենալ մի կոմպրեսոր, վորը ոդաշոգեկաթսային պետք է տա այրման համար անհրաժեշտ ոդը՝ սեղմված վիճակում, պահանջված ճնշման տակ, և վորն այրումից հետո խառնվելով ջրային շոգուն—վերջինիս հետ միասին պիտի մասնակցի աշխատանքային պրոցեսին մեքենայի մեջ։

Այդ կոմպրեսորը, վոր ոդաշոգեմեքենայի կամ ոդաշոգետուրբինի անհրաժեշտ մասն է կազմում, պետք է բանի կամ մեքենայի գլխավոր լիսեռից և կամ անմիջապես մխոցակոթից։

Նմանապես և ոդաշոգեկաթսան, իբրև ոդաշոգեմեքենայի կամ ոդաշոգետուրբինի անհրաժեշտ մաս, պետք է անմիջականորեն կցված լինի յուր մեքենային՝ ստանալով շատ ավելի փոքր ծավալ, քան նույն կարողության սովորական տիպի շոգեկաթսաները։

Նկար 1-ում ցույց է տրված այդպիսի ոդաշոգեկաթսայի սքեման, վորի հնոցի մեջ մտցվում է սեղմված ոդ՝ պատշաճ ճնշման, բացացրի միջոցով սրսկվում է նավթը և այրվում անփոփոխ ճնշման տակ։ այրված գազերը, բարձր բարեխառնությամբ, անցնում են դեպի շոգեցման կամարը, ուր նրանց մեջ սրսկիչների միջոցով ջուր է սրսկվում փոշիացած վիճակում, և այդ ջուրն անմիջապես շոգիանում է անփոփոխ ճնշման տակ, և ստացված շոգին՝ դերատաքացած և այրված գազերի հետ խառն՝ տարվում է խողովակով դեպի ոդաշոգեմեքենան կամ ոդաշոգետուրբինը։ Շոգու դերատաքացման աստիճանը կախում ունի, ինարկի, վառելիքի, ոդի և սրսկվող ջրի քանակությունից։

Ստորև իբրև օրինակ բերված հաշվումները կատարված են միտցավոր ոդաշոգեմեքենայի համար, և նրանց նպատակն է պարզել այդպիսի մեքենայի աշխատանքային պայմանները։

Այս հաշվումներին իբրև հիմք ընդունված են հետևյալ տվյալները.

1. Մի վայրկյանում ծախսվող վառելիքի քանակությունը=0,1 kg/sek նավթ 10000 Cal/kg ջերմատվությամբ։

2. 0,1 kg/sek նավթի լիովին այրման համար ծախսվող ոդի քանակությունն ընդունված է =1,8 kg/sek ոդ, այսինքն՝ վառելիքի 18-ապատիկը։

3. Ցուրաքանչյուր վայրկյան սրսկվող ջրի քանակությունը =1,1 kg/sek ջուր, վոր պետք է խակուն շոգիանա (ընդունելով, վոր 1 kg նավթ այրելով կարելի յե ստանալ 10—12 kg շոգի կամ միջին հաշվով 11 kg շոգի)։

4. Կաթսայի մեջ պահվող ճնշումը = 7 ատմ. (բացարձակ)։

5. Շոգու գերատաքացման աստիճանը = 500° C։ Այս ջերմաստիճանը պիտի լինի շոգիացման կամերում։

6. Կաթսայի մեջ տրվող ջրի սկզբնական ջերմաստիճանը = 80° C։



7. Հնոցի մեջ տրվող սեղմողի սկզբնական ջերմաստիճանը = 120° C։

Հիմնվելով վերոհիշյալի վրա՝ 0,1 kg հավթի այրումից ստացվող ջերմությունը՝ 1000 Cal կծախսվի հետևյալ կերպ.

1,8 kg սեղմոդը 500°C կլանում է 0,24(500—120). 1,8=164,16 Cal
1,1 kg ջրային շոգին՝ 7 ատմ. բացարձակ ճնշման և 500°C
գերտաքացումով, ընդունելով ջրի սկզբնական ջերմաստիճանը 120°C, կկլանի՝ . . . 1,1 (831,5—80) = 827,15 Cal

Գումար 991,15 Cal

Տարբերությունը՝ 1000—991,31 = 8,69 Cal/sek, կարող է կաղմել կորուստը—կաթսայի պատերի միջոցով դեպի դուրս և ճառագայթման միջոցով։ Այս կորուստները փոքրացնելու համար կաթսան շրջապատվում է մեկուսիչ շերտով։

Կաթսայի մեջ ստացվող յեռանդակիր խառնուրդի ծավալը կկազմվի երբև գումար բաղկացուցիչ մասերի ծավալների, վորոնք են՝
V_1 = 1,8 kg ոդի ծավալը 7 ատմ. ճնշման և 500°C բարեխառնության.
V_2 = 1,1 kg ջրից ստացվող շոգու ծավալը 7 ատմ. բաց. և 500°C գերտաքացած.
V_3 = 0,1 kg նավթից գոյացող գազերի ծավալն այրման ժամանակ՝ նույն պայմաններում։

V^1. 70000 = 1,8. R. T = 1,8. 29,3. 773,

վորտեղից կստացվի V_1 — 0,5823 m^3 (ոդ՝ 7 ատմ., 500°C)։ Ըստ աղյուսակի (Табл. для водян. пара, Кноблаух, Райш, и т. д.) ունենք՝

V_2 = 1,1. 0,5158 = 0,5674 m^3 (շոգի՝ 7 ատմ., 500°C)։ 0,1 kg նավթից ստացվող գազերի ծավալը 7 ատմ. բացարձակ ճնշման և 500°C բարեխառնության տակ ընդունում ենք մոտավորապես = 0,051 m^3։

Ուրեմն՝ V_3 = 0,051 m^3 վառելիքից գոյացող գազեր 7 ատմ. ճնշման և 500°C։

Այս յերեք մասերից (ոդ, շոգի և վառելիքի գազեր) գոյացող յեռանդակիր խառնուրդի ծավալը՝ V կլինի—

V = V_1 + V_2 + V_3 = 0,5823 + 0,5674 + 0,051 = 1,2 m^3/sek (7 ատմ. բաց., 500°C)։ Նույն խառնուրդի կշիռը՝ G = 1,8 + 1,1 + 0,1 = = 3 kg։

1 kg խառնուրդի ծավալը կլինի՝ v = V : 3 = 1,2 : 3 = 0,4 m^3։

Խառնուրդի կոնստանտը՝ R_m կստացվի խառնուրդի վիճակային հավասարությունից՝

0,4. 70000 = R_m . 773,

վորտեղից R_m = 36,22, վոր կարելի յե համարել բավարար ճշտության։

Յեթե 1,3 m^3 խառնուրդը՝ 7 ատմ. բաց. ճնշման և 500°C բարեխառնության, մացվելով մխոցավոր մեքենայի գլանի մեջ՝ հնարավո-

թությունն ստանա ընդարձակվելու ըստ ադիաբատի մինչև 2 ատմ. բաց. ճնշման, ապա ադիաբատային ընդարձակումից հետո նրա ընդունած ծավալը՝ V_e կարելի է վորոշել հետևյալ հավասարությունից՝

$$V^k\ 70000 = V_e^{\ k}\ 20000.$$

Աստիճանացույցը՝ K այս խառնուրդի համար ընդունում ենք =1,37։ Ուրեմն կարելի է գրել՝

$$1{,}2^{1{,}37}.\ 70000 = V_e^{\ 1{,}37}.\ 20000,$$

վորտեղից $V_e = 3m^3$։

Ընդարձակման վերջում խառնուրդի բարեխառնությունը կլինի՝

$$3.\ 20000 = 36{,}22\ (273^0 + t) \times 3.$$

$$t = 279^0C.$$

Նկար 2-ը ներկայացնում է դիագրամն այդ խառնուրդի կատարած աշխատանքի, վոր տեղի չէ ունենում ոդաշոգմեքենայի գլանի մեջ։ Դիագրամից երևում է, վոր աշխատած խառնուրդի արտածումը, յենթադրվում է, թե տեղի չէ ունենում 1,1 ատմ. ճնշման տակ։

1,2 m^3 յեռանդակիր խառնուրդի կատարած աշխատանքը մեքենայի մեջ՝ բաղկացած է հետևյալ մասերից.—

1. Լցման ընթացքում կատարվող աշխատանք (դրական)—

$$1{,}2.\ 59000 = 70800\ \text{kgm}.$$

2. Ադիաբատային ընդարձակման ընթացքում կատարվող դրական աշխատանք՝

$$3.\ 36{,}22.\frac{1}{1{,}37-1}(773-552) - 1{,}8.\ 11000 = 3.\ 98.221 - 19800 = 45171\ \text{kgm}.$$

3. Սեղմման ժամանակ կատարվող բացասական աշխատանք, վոր ստացվում է հավասար 5150 kgm։

Այսպիսով 1,2 m^3 խառնուրդը՝ 7 ատմ. բաց. ճնշումով՝ մեքենայի գլանի մեջ կատարում է մի աշխատանք, վոր հավասար է՝

$$70800 + 45174 - 5150 = 110824\ \text{kgm}.$$

Յեթե աշխատանքի մեծությունը վորոշելու լինենք նկ. 2 դիագրամից, ապա կստացվի համարյա նույնը, շատ փոքր տարբերությամբ։

Յեթե 1,2 m^3 խառնուրդը գործադրելու լինենք յուրաքանչյուր վայրկյան, ապա ստացվող աշխատանքը 110824 $^{kgm}/_{sek}$ կկազմի մեքենայի կարողությունը, վորն արտահայտելով ձիաուժերով, կլինի՝

$$110824 : 75 = 1477{,}3\ \text{ձիաուժ},$$

վորը կլինի ոդաշոգմեքենայի ինդիկատորային կարողությունը։

1 ձիաուժ ինդիկատորային կարողության վրա 1 ժամում ծախսվող վառելիքի (նավթի) քանակը կլինի՝

$$\frac{0{,}1.\ 3600}{1477{,}3} = 0{,}243\ \text{kg}/1\ \text{ձիաուժժամ}$$

Ջերմային արդյունավետ գործողության գործակիցն ըստ ինդիկատորային կարողության կստացվի՝

$$\eta_{th} = \frac{110824}{1000.427} \cong 0,26,$$ այսինքն մոտ 26%։



Ընդունելով մեքենայի մեխանիկական արդյունավետ գործողության գործակիցը մինչև հաշվով՝ հավասար 091՝ մեքենայի լիսեռի վրա ստացվող ոգտավետ կարողությունը կլինի՝

$$1477,3 \cdot 0,91 = 1344,34$$ ձիաուժ։

Այս վերջինից եվ 540 ձիաուժ կարողություն պետք է ծախսվի կոմպրեսորի վրա, որը յուրաքանչյուր ժամ պիտի մատակարարի

$\frac{1,8.\ 3600}{1,2} = 5400$ m³ ոդ 1 ատմ. ճնշման և 20° սկզբնական բարեխառնության։

Կոմպրեսորի վրա ծախսվող կարողությունը կարելի է հաշվել հետևյալ կերպ։ Նկատի ունենալով, որ յուրաքանչյուր վայրկյան պետք է սեղմվի 1,8 kg ոդ մինչև 7,4 ատմ. ճնշման, որի ժամանակ ոդի ջերմաստիճանը բարձրանում է 20°-ից մինչև մոտավորապես 228°C, կոմպրեսորի աշխատանքն այս պայմանների համար կվորոշվի՝

$$L = 427.\ 1,8.\ C_v\ (228° - 20°)$$
$$= 427.\ 1,8.\ 0,243.\ 208$$
$$= 427.\ 91,1 = 38900\ \text{kgm/sek},$$

որը վերածելով ձիաուժերի, կլինի՝

$$38900 : 75 = 518,7 \text{ ձիաուժ։}$$

Ընդունելով միաստիճանի կոմպրեսորի համար արդյունավետ գործողության գործակիցը = 0,82, նրա վրա ծախսվող կարողությունը կստացվի՝

$$518,7 : 0,82 \cong 633 \text{ ձիաուժ։}$$

Սակայն 7—8 ատմ. սեղմման համար գերադասելի է կիրառել երկաստիճան կոմպրեսոր, որ տալիս է առնվազն 15% եներգիայի խնայողություն, որով և յերկաստիճան կոմպրեսորի վրա կծախսվի՝

$$633 - 0,15.\ 633 \cong 540 \text{ ձիաուժ։}$$

Մնացորդը՝ 1344 — 540 804 ձիաուժը կլինի ողաշոգեմեքենայի եֆեկտիվ կարողությունը, որի վերաբերմամբ ջերմային արդ. գործ. գործակիցը կստացվի 0,14, այսինքն՝ 14%, որ դգալի չափով ավելի բարձր է, քան սովորական բացփուք շոգեմեքենայի համապատասխան գործակիցը։ Այս կլինի նաև տնտեսական ա. գ. դ.։

Ջերմության ծախսը, հաշված մեկ եֆեկտիվ ձիաուժաժամի վրա, կստացվի՝

$$\frac{0.1.\ 3600.\ 10000}{804} \cong 4480 \text{ Cal/1 եֆեկտ. ձիաուժաժամ։}$$

Մինչդեռ բացփուք շոգեմեքենայի մոտ ջերմության ծախսը կազմում է 7000 cal/եֆ. ձիաուժաժամ, ըստ այսմ և ջերմային գործակիցը 0,9 կամ 9%։

Վառելիքի ծախսը 1 եֆեկտիվ ձիաուժաժամի համար կլինի՝

$$\frac{360}{804} \cong 0,448 \text{ kg/եֆ. ձիաուժաժամ։}$$

Իբրև վառելիք այս դեպքում նկատի չի առնված նավթը։

Ցեռանդակիր խառնուրդի բաշխումն ողաշոգեմեքենայի մոտ տեղի չի ունենալու նույն կերպով, ինչպես որ շոգու բաշխումը շոգեմեքենայի մոտ։

Ողաշոգեմեքենայի կանոնավորումը նույնպես կարող է տեղի ունենալ նույն սկզբունքով, ինչպես ընդունված է այլ տեսակի շարժիչների մոտ, այն է՝ յուռնգակիր խառնուրդի քանակի փոփոխելով։ Այս դեպքում իհարկե կանոնավորումը պետք է ոգի թե ոդի, թե վառելիքի և թե սրսկվող ջրի քանակությունների վրա՝ փոփոխելով նրանց այնպես, որ պահպանվի պատշաճ հարաբերությունը (պրոպորցիա) նրանց միջև։

Ողաշոգեմեքենան աշխատանքի վստահելիության տեսակետից պահպանում է այն բոլոր առավելությունները, որ ունի շոգեմեքենան, և միաժամանակ ունի նաև այնպիսի առավելություններ, որ հատուկ են ներքին այրման շարժիչներին։

Ողաշոգեմեքենայի առավել կողմերից կարելի է նշել հետևյալները.—

1. Ընթացքի դցելու համար պահանջում է քիչ ժամանակ։

2. Գրավում է համեմատաբար փոքր տեղ ողաշոգեկաթսայի հետ միասին։

3. Աշխատանքի մեջ նույնքան վստահելի է և հարմարվող, ինչպես շոգեմեքենան, և թույլ է տալիս պատուտաթվի փոփոխում լայն սահմաններում, մի բան, որ չի կարելի ասել ներքին այրեցման շարժիչների նկատմամբ։

4. Ջերմային գործակիցն ավելի բարձր է, քան սովորական բացփոք շոգեմեքենայինը։

5. Մեքենայի ներսում չի տիրում այնպիսի բարձր բարեխառնություն, որ դժվարացնի յուղումը և առհասարակ մեքենայի սպասարկումը։ Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի նաև այն տեսակետից, որ մեքենայի կառուցման համար չի պահանջվում հատուկ մատերիալ, որ թանդ է նստում։

Շնորհիվ վերոհիշյալ հատկությունների՝ ողաշոգեմեքենան շատ հարմար է դուրս գալիս տրանսպորտում գործածելու համար, մանավանդ յերկաթուղիների վրա։ Այս ասպարիզում նա, ունենալով ավելի բարձր ջերմային գործակից, կարող է տալ վառելիքի մեծ խնայողություն։

Ողաշոգեկաթսայից կարող է անվել, ինչպես ասացինք, նաև ողաշոգետուրբինը, որ հավանորեն կբանի ավելի բարձր գործակցով։ Այսպիսով վորոշ չափով լուծված կլինի ջերմային տուրբինի պրոբլեմը։

Ողաշոգեկաթսան յուր կառուցվածքով և աշխատելու յեղանակով հնարավորություն է տալիս իբրև եներգիայի աղբյուր կիրառելու նաև նոր նյութեր, վորոնք մինչև այժմ այդպիսի նպատակով դեռևս

գործնական կիրառություն չունեն. սրանցից ևս հնարավոր կլինի պատրաստել աշխատանքային խառնուրդներ, որոնք կարող են տալ ավելի բարձր եֆեկտ։

Սրանով, կարելի չե ասել, բացվում և մի նոր ուղի ջերմային շարժիչների հետագա զարգացման համար։

Д. Г. АКОПДЖАНЯН.
Зав. кафедрой машиновед. и механизации.

ДВИГАТЕЛИ РАБОТАЮЩИЕ СМЕСЬЮ ВОЗДУХА И ВОДЯНОГО ПАРА.

Вышеназванная рабочая смесь изготовляется в так называемом воздушно-паровом котле (черт. 1), состоящем из водяного пространства, цилиндрической топки и камеры парообразования. Сжатый воздух для горения подается в топку из компрессора под соответственным давлением.

Газы горения дают часть своей теплоты через стенки топки содержащейся в котле воде, находящейся под надлежащим давлением, подогревают ее до температуры кипения и уходят в камеру парообразования. В этой последней посредством распылителей впрыскивается в горячие газы горения, в тонко распыленном виде, подогретая в котле вода, которая придя в соприкосновение с горячими газами, моментально превращается в перегретый пар. Таким образом в камере парообразования получается смесь воздуха (точнее газов горения) и водяного пара. Эта смесь вводится в поршневую машину или турбину и приводит их в движение.

Машины, работающие подобной смесью, автор называет воздушно-паровой машиной и возд.-пар. турбиною.

По расчету экономической к. п. д. воздушно-паровой машины (поршневой) получается равным 0,14, т. е. 14%, а расход тепла на одну лош. силу в час (полезную) равен 4480 кал., следовательно на много благоприятнее, чем у паровой машины работающей без охлаждения.

По мнению автора воздушно-паровой котел с воздушно-паровой машиной могут найти успешное применение на железно-дорожных локомотивах и дать значительную экономию топлива, т. к. возд.-пар. машина сохраняет все преимущества обыкновенной паровой машины относительно надежности работы и приспособляемости к условиям тяги, имея притом более высокий тепловой к. п. д., чем паровая машина, работающая на паровозе без охлаждения.

Պրոֆ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Ցեսակոն Մեխանիկայի ամբիոնի վարիչ

ՆԵՐՔԻՆ ԼԱՐՈՒՄՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԱՆԸՆԴՀԱՏ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

1. Այս աշխատության մեջ նոր արդյունքներ չկան։ Նոր է միայն յեղանակը, որը հենց հարմար յեղանակ լինելով՝ հերքում է այն կարծիքը, թե վեկտորական հաշիվը ոգտակար է մեխանիկայի վրչ բոլոր բաժիններում։

Ահա այդպիսի կարծիքներից մեկը[1]).

«Նյուտերի դիմադրության մեջ մեծ ոգուտ չի ստացվի, յեթե կորդինատների կամ կոմպոնենտների փոխարեն հաշվումները կատարվեն հենց վեկտորներով, — մի բան, որ մեխանիկայի մնացած մասերում ոգտակար է»։

2. Անընդհատ միջավայրում ներքին լարումների հատկություններն արտածելու համար միշտ ոգտվում են հետևյալ թեորեմից.

Յերբ սխտեմը գտնվում է հավասարակշռության մեջ, ապա

(I) արտաքին ուժերի գլխավոր վեկտորը հավասար է 0,

(II) այդ ուժերի գլխավոր մոմենտը հավասար է 0։

Սովորաբար (I)-ը կիրառում են ելեմենտար տետրաեդրին[2]),[3]),[4]) որոի գագաթներից մեկում 3 գծային անկյունները ուղիղ են, իսկ (II)-ը կիրառում են ելեմենտար ուղղանկյուն պարալելեպիպեդին[2]), կամ գնդին[3]) և կամ մի ծավալի, որը կարող է սահմանափակված լինել որևե կամավոր մակերևույթով[4])։

Վերջի դեպքում հարկ է լինում դիմել ինտեգրալ հաշվի բանաձևերին և մակերևույթային ինտեգրալները ձևափոխել ծավալային ինտեգրալների։

Բոլոր այս արտածումները միանգամայն անառարկելի յեն մաթեմատիկական ճշտության տեսակետից։ Բայց բնականաբար հարց

---

1) Föppl, Vorlesungen über technische Mechanik Bd. III, zehnte Auflage, Leipzig—Berlin, *յեր. 16*։ «Un der Festigkeitslehre wird nicht viel damit gewonnen, wenn man an stelle von koordinaten oder komponenten mit den gerichteten Grössen selbst rechnet, was in den meisten übrigen Teilen der Mechanik von Vorteil ist.»

2) *Որինակ՝* E. Sarrau, Notions sur la théorie de l'élasticité, Paris, G.—Villars, 1899, *յեր. 8—11*։

3) P. Painlevé et Ch. Platrier, Cours de Mécanique, Paris, G.—Villars, 1929, *յեր. 187*։

4) *Որինակ՝* M. Lagally Vorlesungen über Vector — Rechnung, Leipzig, 1928, *յեր. 255—256*։

և ծագում, թե ինչն և ստիպում, վոր բացի տետրաեդրից դիտարկվի նաև պարալելիպեդը, կամ գունդը և կամ վորևե ծավալ՝ սահմանափակված մի կամավոր մակերևույթով։

Այս հարցն և ակնարկում Ֆյոպպլը[1]) ասելով, թե դատողությունների սահմանափակումը միայն տետրաեդրի դիտարկությամբ՝ դժվարություններ առաջ կբերի։

Այս զեկուցման նպատակն է ցույց տալ, թե վորքան հեշտ կերպով են վորոշվում ներքին լարումների հատկությունները միմիայն մի կամավոր ելեմենտար տետրաեդրի դիտարկությամբ, յեթե պատշաճ կերպով կիրառվում է վեկտորական ալգեբրան։ Հարևանցիորեն հիշված է այստեղ մի ինվարիանտ առնչության մասին, վորին ուրիշ տեղ չեմ պատահել։

3. Նշանակումներ։ Վեկտորները նշանակվում են մեկ կամ յերկու տառով, վորոնց վրա դրված են գծիկներ. օրինակ՝ $\bar{a}$, $\overline{OC}$—վեկտորներ են, վորոնց չափերն են a, $OC \cdot \bar{a} \cdot \bar{b}$ և $\bar{a} \times \bar{b}$ ցույց են տալիս $\bar{a}$, $\bar{b}$ վեկտորների սկալար և վեկտորական արտադրյալները.

$a.b \times c \equiv \bar{a}\,\bar{b}\,\bar{c}$ նշանակում է $\bar{a}, \bar{b}, \bar{c}$ վեկտորների խառն արտադրյալը. ինչպես հայտնի է

$$\bar{a}\,\bar{b}\,\bar{c} = \bar{b}\,\bar{c}\,\bar{a} = \bar{c}\,\bar{a}\,\bar{b} \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad (1)$$

4. Վորպեսզի հետագայում դատողության ընթացքը չընդհատվի և թերություններ չստացվեն, մեզ հարկավոր է ապացուցել մի լեմմա այն մասին, վոր ելեմենտար լարումները կարելի յե վերածել մի հատվածի [§ 5]։ Պետք է նաև արտածել մի ֆորմուլ, վորով վորոշվում են կամավոր տետրաեդրի յերեք կողմերի մակերեսները չորրորդ կողմի մակերեսի միջոցով։

Թող O, A_1, A_2, A_3-ը լինեն մի կամավոր տետրաեդրի գագաթները։

Ընդունենք $\overline{OA_k} = \bar{r}_k$ և նշանակենք S_k-ով այն կողմը, վորը դտնվում է A_k-ի դիմաց։ Թող $\bar{n}_k$-ն լինի մի միավոր վեկտոր, վոր ուղղահայաց է S_k-ին. թող σ_k-ն լինի S_k-ի վեկտորական մակերեսը։ S, σ, n-ով նշանակվում է համապատասխանաբար այն կողմը, վոր դտնվում է O-ի դիմաց, նրա վեկտորային մակերեսը և S-ին ուղղահայաց միավոր վեկտորը։

---

1) Föppl, loc. cit, յեր. 15 «...Man kann diese Bedingungen für das Tetraeder ableiten, indem man Momentengleichungen anschreibt. Wir wollen aber dazu einen bequemeren Weg wählen, indem wir an Stelle des Tetraeders ein unenidlich kleines Parallelepiped betrachten».

$$\left.\begin{array}{l} 2\bar{\sigma}_k = \bar{r}_l \times \bar{r}_m = 2\bar{n}_k \sigma_k, \\ klm = 123,\ 231,\ 312 \\ \bar{\sigma} = \bar{n}\sigma \end{array}\right\} \quad \ldots\ldots \quad (2)$$

Յուրաքանչյուր փակ բազմանիստի բոլոր նիստերի վեկտորային մակերեսների գումարը հավասար է 0-ի։

Հետևաբար

$$\bar{n}_1\sigma_1 + \bar{n}_2\sigma_2 + \bar{n}_3\sigma_3 + \bar{n}\sigma = 0 \quad \ldots\ldots \quad (3)$$

Վերցնենք $\bar{N}_1$, $\bar{N}_2$, $\bar{N}_3$ *վեկտորների մի նոր յեռյակ, որ փոխադարձ է* $\bar{n}_1$, $\bar{n}_2$, $\bar{n}_3$ *յեռյակին։ Համաձայն փոխադարձ սիստեմների սահմանման*[1]*, ունենք*

$$\bar{N}_k = \frac{\bar{r}_l \times \bar{r}_m}{\bar{n}_k\ \bar{n}_l\ \bar{n}_m}, \quad klm = 123,\ 231,\ 312: \quad \ldots \quad (4)$$

$$\bar{N}_k . \bar{n}_k = 1, \quad \bar{N}_k . \bar{n}_l = \bar{N}_k\ \bar{n}_m = 0 \quad \ldots\ldots \quad (5)$$

(4)-ի մեջ $\bar{n}_l$ *և* $\bar{n}_m$*-ի փոխարեն դնենք նրանց արտահայտությունները (2)-ից. կստանանք*

$$\bar{N}_k = \frac{2\bar{r}_k\ \sigma_k}{v}, \quad \ldots\ldots\ldots\ldots \quad (6)$$

վորտեղ $v = \bar{r}_k\ \bar{r}_l\ \bar{r}_m$ *ցույց է տալիս ծավալն այն պարալելեպիպեդի, վորը կառուցված է* $\bar{r}_1$, $\bar{r}_2$, $\bar{r}_3$ *կողերի վրա։*

Սկալյորեն բազմապատկելով (3)-ը $\bar{N}_k$*-ով և նկատի առնելով (5), ստանում ենք հետևյալ ֆորմուլը՝*

$$\sigma_k = -\sigma\bar{n} . \bar{N}_k \qquad k = 1,\ 2,\ 3, \quad \ldots\ldots \quad (7)$$

վորն արտահայտում է σ_k*-ն* σ*-ի միջոցով։*

5. Ուսումնասիրենք անընդհատ միջավայրում տարած Π *հարթության վրա գտնվող հարևան կետերի լարումները։ Սրա համար վերցնենք* Π*-ի շատ փոքր* P *մասը, վորն ունի* ω *մակերեսը։ Թող* C *և* A *համապատասխանորեն լինեն* P*-ի իներցիայի կենտրոնը և մի վորևե կետը, իսկ* $\bar{T}_c$ *և* $\bar{T}$*—լարումներն այդ կետերում.* $\overline{CA} = \bar{r}$.

Ընդունելով, որ լարումը կետի անընդհատ ֆունկցիա յե, $\bar{T} = \bar{f}(\bar{r})$*, կարող ենք* T *վերածել շարքի, և վորովհետև* P*-ի գծային չափերը շատ փոքր են, այդ շարքից կպահենք միայն յերկու անդամ. այսպիսով կստանանք՝*

$$\bar{T} = \bar{T}_c + \psi\bar{r}, \quad \ldots\ldots\ldots\ldots \quad (8)$$

---

[1]) *Որինակ՝* M. Lagally l. c., *յեր. 37։*

վորտեղ $\psi\bar{r}$-ը $\bar{r}$-ի գծային վեկտորական ֆունկցիա է. (8)-ից հետևվում է, վոր P-ի մակերեսի dω էլեմենտի վրա ազդող ուժը կլինի՝

$$\bar{T}d\omega = \bar{T}_c d\omega + \psi\bar{r}d\omega. \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad (8')$$

Այժմ հեշտ է ապացուցել հետևյալ լեմման. —

(9) Զորևէ շատ փոքր մակերեսի վրա ազդող $\bar{T}d\omega$ ուժերի սիստեմը կարելի է բերել $\bar{T}_c\omega$ համազորի, վորի կիրառման կետն իներցիայի C կենտրոնն է։

Իսկապես այս ուժերի գլխավոր մոմենտը C-ի նկատմամբ և նրանց գլխավոր վեկտորը կլինեն՝

$$\bar{M}_c = \int \bar{r} \times \bar{T}d\omega, \qquad \bar{F} = \int \bar{T}d\omega$$

կամ ըստ (8')-ի

$$\bar{M}_c = (\int \bar{r}d\omega) \times \bar{T}_c + \int \bar{r} \times (\psi\bar{r})d\omega$$

$$\bar{F} = \int \bar{T}_c d\omega + \psi(\int \bar{r}d\omega).$$

Ըստ իներցիայի կենտրոնի հատկության $\int \bar{r}d\omega = O$, հետևաբար

$$\left.\begin{aligned} \bar{M}_c &= \int \bar{r} \times (\psi\bar{r})d\omega \\ \bar{F} &= \bar{T}_c\omega \end{aligned}\right\} \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad (10)$$

(10)-ից հետևում է, վոր եթե $\bar{r}$-ն առաջին կարգի անվերջ փոքր մեծություն է, $\bar{M}_c$-ն 4-րդ կարգի անվերջ փոքրից ավելի ցածր չի լինի։ Մինչդեռ հանրածանոթ ֆորմուլը[1])

$$\bar{M}_A - \bar{M}_c = \overline{AC} \times \bar{F} = -\bar{r} \times \bar{T} = -\bar{r} \times \bar{T}_c\omega,$$

ցույց է տալիս, վոր $\bar{T}d\omega$ ուժերի գլխավոր մոմենտը P մասի վորևէ A կետի նկատմամբ 3-րդ կարգի փոքրություններից ավելի ցածր չէ։

Այս պատճառով մենք իրավունք ունենք, արհամարհելով 4-րդ կարգի մեծությունները, ընդունել $\bar{M}_c = O$. իսկ այդ նշանակում է, վոր $Td\omega$ ուժերը բերվում են $\bar{T}d\omega$ համազորի, վորն ազդում է P մասի իներցիայի կենտրոնում։

6. Անցնելով ներքին լարումների հատկությունների վորոշման՝ յերևակայենք, թե անընդհատ մի ջավայրում վերցրել ենք մի կամավոր տետրաեդր՝ $OA_1A_2A_3$, վորի կողերը ներկայացնում են առաջին կարգի անվերջ փոքր մեծություններ։

T_k, $\bar{T}$ թող լինեն լարումները S_k, S նիստերի C_k, C իներցիայի

---

1) Որինակ՝ G. Bouligand, Précis de Mécanique rationnelle, Paris Vuibert, 1925, t I, էջ. 5.

կենտրոններում, k ‖ 1, 2, 3։ Համաձայն (9) լեմմայի՝ այս նիստերի վրա ազդող մակերևույթային ուժերի սիստեմը բերվում է $\overline{T}_k\sigma_k$, $\overline{T}\sigma$ համազորների, որոնք համապատասխանաբար կիրառված են C_k, C կետերում։

Վորովհետև տետրաեդրի ծավալը ներկայացնում է 3-րդ կարգի մեծություն, ապա տետրաեդրի վրա ազդող ծավալային ուժերի գլխավոր վեկտորը կներկայացնի 3-րդ կարգի մեծությունից վոչ ցածր մի մեծություն։ Այդ պատճառով էլ նա կարող է անտես առնվել՝ համեմատած 2-րդ կարգի մեծությունների հետ, ինչպես են $\overline{T}_k\sigma_k$, $\overline{T}\sigma$։

Յենթադրելով, վոր տետրաեդրը հավասարակշռության մեջ է, և կիրառելով (I) — կասանանք

$$\overline{T}_1\sigma_1 + \overline{T}_2\sigma_2 + \overline{T}_3\sigma_3 + \overline{T}\sigma = 0:$$

Տեղադրելով σ_k-ի փոխարեն նրա նշանակությունը (7)-ից և կըրճատելով σ-ով, տեսնում ենք, վոր

$$\overline{T} = \overline{n}\,.\,\Sigma\overline{N}_k\,\overline{T}_k,\ k=1,\ 2,\ 3: \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad (11)$$

Նշանակենք $\Sigma\overline{N}_k\,\overline{T}_k$ դիրքը δ-ով. այն ժամանակ

$$\overline{P} = \overline{n}\,.\,\delta: \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad (12)$$

7. Վորպեսզի (II)-ն ավելի հարմար կերպով կիրառվի տետրաեդրին, իրրև մոմենտների կենտրոն ընդունենք նրա O գագաթ։ Դնելով $\overline{CC_1} \equiv \overline{r}_k$, $\overline{CC} \equiv$

$$\left.\begin{aligned} \overline{\delta}_k &= \frac{\overline{r}_l + \overline{r}_m}{\ }, \quad klm = \\ &\quad 123,\ 231,\ 312 \\ \overline{\rho} &= \frac{\overline{r}_1 + \overline{r}_2 + \overline{r}_3}{3} \end{aligned}\right\} \quad . \quad . \quad (13)$$



Գ.ծ. 1

Վորովհետև մակերևային ուժերը, վորոնք ազդում են S_k, S նիստերի վրա, բերվում են ըստ (9)-ի $\overline{T}_k\sigma_k$, $\overline{T}\sigma$ համազորների, վորոնք կիրառված են C_k, C կետերում, ուստի այդ ուժերի գլխավոր մոմենտը O-ի նկատմամբ կլինի՝

$$\overline{M}_0 = \overline{\rho}_1 \times \overline{T}_1\sigma_1 + \overline{\rho}_2 \times \overline{T}_2\sigma_2 + \overline{\rho}_3 \times \overline{T}_3\sigma_3 + \overline{\rho} \times \overline{T}\sigma \quad . \quad . \quad (14)$$

Ինչպես տեսնում ենք, այս մոմենտը 3-րդ կարգի փոքր մեծություն է. իսկ ծավալային ուժերի գլխավոր մոմենտը մեծ մա-

սամբ ավելի բարձր կարգի յե։ Յերբ այս տեղի յե ունենում, ապա (II)-ը կտա $\overline{M}_0 = 0$։

Տեղադրելով այս հավասարության մեջ $\overline{\rho}_k$, $\overline{\rho}$-ի փոխարեն նրանց արտահայտությունները (13)—կստանանք

$$\overline{r}_1 \times \overline{T}_1 \sigma_1 + \overline{r}_2 \times \overline{T}_2 \sigma_2 + \overline{r}_3 \times \overline{T}_3 \sigma_3 = 0,$$

կամ թե (6)-ի հիման վրա՝

$$\overline{N}_1 \times \overline{T}_1 + \overline{N}_2 \times \overline{T}_2 + \overline{N}_3 \times \overline{T}_3 = 0 \quad . \quad . \quad . \quad . \quad (15)$$

(15)-ը ցույց է տալիս, որ δ դիադը սիմետրիկ է[1]։

Այս դիադի սիմետրիկ լինելը հաստատելու համար է, որ դիտարկության են առնում սովորաբար պարալելեպիպեդի հավասարակշռությունը, կամ գնդինը և այլն։ Վերը բերած արտածումը համոզում է մեզ, որ այդ միջոցին դիմելու վոչ մի կարիք չկա։

8. Ներքին լարումների հատկություններից մի քանիսը δ դիադի ինվարիանտների արտահայտություններն են։

Այս հատկություններից ամենաեականները — այն է՝ գլխավոր ուղղությունների գոյությունը և Cauchy-ի թեորեմը—անմիջականորեն բղխում են սիմետրիկ դիադների սահմանումից։ $\overline{n}_1$ և $\overline{n}_2$ թող լինեն O կետով անցկացրած P_1 և P_2 հարթությունների նորմալների միավոր վեկտորները։ $\overline{T}_1$ և $\overline{T}_2$ թող լինեն լարումներն այդ հարթությունների վրա՝ O կետում։ Համաձայն (12)-ի

$$\overline{T}_1 = \overline{n}_1 . \delta, \quad \overline{T}_2 = \overline{n}_2 . \delta$$

Վորովհետև ըստ սիմետրիկ դիադների հատկության ունենք $\overline{n}_1 . \delta . \overline{n}_2 = \overline{n}_2 . \delta . \overline{n}_1$, ապա $\overline{T}_1 . \overline{n}_2 = \overline{T}_2 . \overline{n}_1$. հենց այս է Cauchy-ի թեորեմը։

Նույն սիմետրիականությունից բղխում է մի թեորեմ ևս։

Թող P_1, P_2, P_3-ը լինեն յերեք իրար ուղղահայաց հարթություններ՝ տարված O կետով. $\overline{T}_1$, $\overline{T}_2$, $\overline{T}_3$—լարումներն այդ հարթությունների վրա՝ O կետում, իսկ $\overline{n}_1$, $\overline{n}_2$, $\overline{n}_3$—P_1, P_2, P_3-ի նորմալների միավոր վեկտորները։

Ինչպես հայտնի յե, սիմետրիկ դիադներում կլինի

$$\overline{n}_1 . \delta \overline{n}_1 \times + \overline{n}_2 . \delta \overline{n}_2 \times + \overline{n}_3 . \delta \times \overline{n}_3 = 0 \quad . \quad . \quad . \quad (16)$$

Բայց յերբ $\overline{n}_k . \delta = \overline{T}_k$, ապա $\overline{n}_k . \delta \times \overline{n}_k = \overline{T}_k \times \overline{n}_k$. ուստի (16)-ը կտա

$$\overline{T}_1 \times \overline{n}_1 + \overline{T}_2 \times \overline{n}_2 + \overline{T}_3 \times \overline{n}_3 = 0 \quad . \quad . \quad . \quad . \quad (16')$$

Վորպեսզի պարզվի (16′)-ի նշանակությունը, լարումներից յու-

---

1) M. Lagally, l. c. յեր. 194—195։

բաքանչյուրը վերածենք նորմալ և տանգենցիալ (T) բաղադրիչների, կստանանք

$$\overline{T}_k \times \overline{n}_k = \overline{T} \times_k \overline{n}_k \equiv \overline{\Gamma}_k,$$

ընդ որում $\overline{T}_k \times \overline{n}_k$—տանգենցիալ լարումն է, դարձված P_k հարթության վրա 90°-ով (ըստ ձախ ձեռքի կանոնի),



Գծ. 2

Այսպիսով (16′)-ը տալիս է՝

$$\overline{\Gamma}_1 + \overline{\Gamma}_2 + \overline{\Gamma}_3 = 0, \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad . \quad (17)$$

Այստեղից հետևում է ամենից առաջ, որ $\overline{\Gamma}_1, \overline{\Gamma}_2, \overline{\Gamma}_3$ կոպլանար են։

(17)-ի մի ուրիշ հետևողությունն էլ այն է, որ որևէ զույգ ուղղահայաց հարթությունների համար, (P_1, P_2), (P_1', P_2'), որոնք ունեն ընդհանուր հատման գիծ (OL), միշտ $\overline{\Gamma}_1 + \overline{\Gamma}_2 = \text{const}$։ Իսկապես ըստ (17)-ի P_1, P_2, P_3 իրար ուղղահայաց հարթությունների համար ունենք $\overline{\Gamma}_1 + \overline{\Gamma}_2 + \overline{\Gamma}_3 = 0$, իսկ P_1', P_2', P_3 իրար ուղղահայաց հարթությունների համար՝ $\overline{\Gamma}_1' + \overline{\Gamma}_2' + \overline{\Gamma}_3' = 0$։

Իրար հետ համեմատելով՝ կստանանք

$$\overline{\Gamma}_1' + \overline{\Gamma}_2' = \overline{\Gamma}_1 + \overline{\Gamma}_2 = -\overline{\Gamma}_3 = \text{const}.$$

Վերջապես (17)-ից կարելի է դուրս բերել մի հետևանք ևս, որ բխում է նույնպես Cauchy-ի թեորեմից՝

Եթե O կետով անցնող յերեք իրար ուղղահայաց հարթություններից մեկը զլխավորն է, ապա մյուս յերկու հարթությունների վրա լարումներն O կետում նրան զուգահեռ են։ Այս զեկուցման նպատակը չէ տալ ստացված (12) և (16′) բանաձևերի բոլոր կիրառումները։

Проф. АЛ-ДР АКОПЯН
Зав. кафедрой теорет. механики

"О РАСПРЕДЕЛЕНИИ ВНУТРЕННИХ НАПРЯЖЕНИЙ В НЕПРЕРЫВНОЙ СРЕДЕ"

Краткое изложение.

При выводе свойств внутренних напряжений обычно рассматривают равновесие элементарного прямоугольного тетраедра и еще какого нибудь второго тела (прямоугольного параллелепипеда, шара или тела, ограниченного произвольной поверхностью), к которому применяют уравнение моментов.

В настоящей заметке показывается, что векторная алгебра позволяет очень легко вывести все свойства внутрениих напряжений из рассмотрения равновесия одного только элементарного произвольного тетраедра.

ԻՆԺ. ՀԱԿՈԲ ԽԱԼՓԱԽՉՅԱՆ

ՑԵՄԵՆՏԻ ԿԾԿՈՒՄԸ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ ՅԵՎ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Ցեմենտների կծկումը*) դասվում է այն յերևույթների շարքը, վորոնք աննպաստ ազդեցություն են թողնում բետոնային կառուցվածքների նորմալ աշխատանքի վրա։ Այս պատճառով միանգամայն հասկանալի է, թե ինչու, մանավանդ վերջին ժամանակներս, մեծ ուշադրությամբ ուսումնասիրվում է այդ յերևույթը։

Կծկման յերևույթը, չնայած մի շարք ընդարձակ աշխատությունների (պրոֆ. Gary, Otto Graff, Ռոշ և ուրիշները), շնորհիվ նրա բարդության, դեռևս լրիվ ուսումնասիրված չէ։

Ցեմենտների կծկման վրա ազդում են մի շարք ֆակտորներ. նպատակահարմար է այդ ֆակտորները բաժանել յերկու խմբի.

1. Ներքին կարգի ֆակտորներ, վորոնք պայմանավորված են նմուշի բաղադրությամբ և նրա պատրաստման յեղանակով (կապակցող նյութեր, լցանյութեր, այլ խառնուրդներ, ջրի քանակությունը, բետոնի խտությունը և այլն)։

2. Արտաքին ֆակտորներ, վորոնք պայմանավորված են շրջապատող միջավայրի վիճակով (ջերմաստիճան, խոնավություն)։

Մեր հետազոտության նպատակն էր՝ ա) տեղական պորտլանդ ցեմենտների և պուցոլանային պորտլանդ ցեմենտի նմուշների կծկման համեմատական ուսումնասիրությունը, բ) ցեմենտի նմուշների կծկման վրա յերկու ֆակտորների՝ ջրապարունակության և ջերմաստիճանի միատեղ ազդեցությունը։

Ուսումնասիրության է յենթարկվել ցեմենտի յերեք տեսակ՝

1. Կասպիի գործարանի պորտլանդ ցեմենտը (Վրաստան), վոր իր հատկություններով մոտիկ է «00» մարկային։

2. Դավալուի գործարանի 1933 թվի նոյեմբերին արտադրած պորտլանդ ցեմենտը, վորը դեռևս վորոշակի մարկա չուներ։

3. Պուցոլանային ցեմենտ՝ պատրաստված Դավալուի ցեմենտի և Անու պեմզայի մանրունքի հավասար քանակությունների խառնուրդից։

Ցուրաքանչյուր ցեմենտից պատրաստված են յեղել 10 սանտիմետր յերկարության և 2,25×2,25 см² կտրվածքով պրիզմական նմուշներ, վորոնց գծային դեֆորմացիան չափվել է Բաուշինգերի գործիքի միջոցով 0,005 մմ ճշտությամբ։

*) Կծկում—усадка.

Աղյուսակ № 1

Չոր ոդում պահված Կասպիի ցեմենտի նմուշների կծկումը՝ %-ներով

Խառնք.	Ժամկետ / №№ նմուշ.	7 որ	1 ամ.	2 ամ.	3 ամ.	4 ամ.	5 ամ.	6 ամ.	7 ամ.	9 ամ.	10 ամ.	11 ամ.	12 ամ.	13 ամ.
Նորմալ շաղախ	1	—0,124	—0,299	—0,386	—0,424	—0,475	—0,510	—0,545	—0,562	—0,617	—0,610	—0,608	—0,600	—0,600
»	2	—0,146	—0,287	—0,358	—0,400	—0,435	—0,468	—0,510	—0,530	—0,600	—0,600	—0,578	—0,563	—0,570
30%	3	—0,152	—0,281	—0,349	—0,375	—0,410	—0,450	—0,483	—0,518	—0,567	—0,555	—0,550	—0,538	—0,540
30%	4	—0,160	—0,287	—0,343	—0,375	—0,414	—0,463	—0,497	—0,497	—0,496	—0,513	—0,507	—0,513	—0,520

Աղյուսակ № 2

Ջրում պահված Կասպիի ցեմենտի նմուշների կծկումը՝ %-ներով

Խառնքյուն	Ժամկետ / №№ նմուշ.	7 որ	1 ամ.	2 ամ.	3 ամ.	4 ամ.	5 ամ.	6 ամ.	9 ամ.	10 ամ.	11 ամ.	13 ամ.	15 ամ.
Նորմալ շաղախ.	5	+0,018	+0,056	+0,055	0,068	0,079	0,094	0,096	0,122	0,129	0,138	0,162	0,178
»	6	0,018	0,057	0,072	0,069	0,081	0,083	0,090	0,117	0,124	0,125	0,152	0,160
30%	7	0,006	0,009	0,031	0,028	0,042	0,051	0,051	0,086	0,095	0,104	0,120	0,120

Աղյուսակ № 3

Չոր ոդում պահված Դավալուի ցեմենթի նմուշների կծկումը՝ %-ներով

Խառնուրդներ	Ժամկետ / №№ նմուշ.	7 որ	1 ամ.	2 ամ.	3 ամ.	4 ամ.	5 ամ.	6 ամ.	7 ամ.	9 ամ.	10 ամ.
Նորմալ շաղախ	1′	—0,112	—0,178	—0,203	—0,213	—0,216	—0.200	—0,183	—0,176	—0,138	—0,142
»	2′	—0,119	—0,193	—0,231	—0,248	—0,249	—0,243	—0,232	—0,233	—0,215	—0,223
»	3′	—0,132	—0,203	—0,232	—0,232	—0,266	—0,254	—0,248	—0,251	—0,226	—0,230

Աղյուսակ № 4

Ջրում պահված Դավալուի ցեմենթի նմուշների կծկումը՝ %-ներով.

	Ժամկետ / №№ նմուշ.	7 որ	1 ամ.	2 ամ.	3 ամ.	4 ամ.	6 ամ.	7 ամ.	8 ամ.	9 ամ.	10 ամ.	11 ամ.
	4′	0,064	0,107	0,119	0,142	—	0,156	0,191	0,200	0,209	0,206	—
	5′	0,048	0,090	0,120	0,118	—	0,172	0,178	0,190	0,194	0,200	0,196
	6′	0,050	0,091	0,119	0,126	—	0,169	0,170	0,188	0,190	0,192	0,197
30%	7′	0,035	0,086	0,120	0,126	0,155	—	0.161	0,205	0,225	0,251	0,258
	8′	0,027	0,061	0,090	0,098	0,112	—	0,160	0,184	0,188	0,198	0,209

Աղյուսակ № 5

Ձավ պրամ պահված պրցելանային ցեմենտի նմուշների կծկումը՝ %-ներով.

ժամկետ / №№ նմուշ	7 որ.	1 ամ.	2 ամ.	4 ամ.	5 ամ.	6 ամ.	7 ամ.	8 ամ.
1″	—0,153	—0,274	—0,290	—0,307	—0,302	—0,304	—0,290	—0,292
2″	—0,157	—0,286	—0,298	—0,316	—0,315	—0,310	—0,302	—0,304
3″	—0,181	—0,282	—0,290	—0,304	—0,301	—0,299	—0,294	—0,298

Աղյուսակ № 6

Ջրում պահված պրցելանային ցեմենտի նմուշների կծկումը %-ներով.

ժամկետ / №№ նմուշ.	7 որ	1 ամ.	3 ամ.	4 ամ.	5 ամ.	6 ամ.	8 ամ.	10 ամ.
4″	0,002	0,003	0,026	0,032	0,033	0,150	0,052	0,050
5″	0,003	0,008	0,017	0,026	0,029	0,038	0,038	0,030
6″	0,002	0,017	0,031	0,034	0,052	0,050	0,056	0,057

Նմուշները պատրաստված են յեղել նորմալ խտություն ունեցող ցեմենտի շաղախից և ջրի այլ խառնուրդ ունեցող շաղախից ու պահվել են տարբեր պայմաններում, այն է՝

1. սենյակի բաց ոդում,

2. ջրի մեջ խորասուզված (պատրաստվելուց յերեք որ հետո),

3. Ծծմբական թթու պարունակող եքսիկատորում։

Եքսիկատորում պահելու նպատակն եր՝ արագացնել նմուշները չորացնելու ընթացքը։

15 ամսվա ընթացքում իմ կողմից վերոշված նմուշների կծկման արդյունքները բերված են 1—6 աղյուսակներում, վերոնց հիման վրա կառուցված են կորերը։

Ստացված արդյունքներից կարելի է յեզրակացնել.

1. Չոր ոդում պահված յերեք տիպի ցեմենտներից առավելագույն կծկման և յենթարկվել Կասպիի ցեմենտը, տալով 0,61% կծկում, ապա պուցոլանային ցեմենտը՝ 0,31% կծկում, և վերջապես Դավալուլի ցեմենտը՝ 0,24% կծկում։



Գծագիր 1.

2. Պուցոլանային խառնուրդների դեպքում չոր ոդում պահված նմուշի կծկումը, մաքուր ցեմենտի կծկման հետ համեմատած, տալիս է 25—30% ավելացում։

3. Կծկման մեծությունը մեծ չափով կախված է միջավայրի ջերմաստիճանից, վորը պարզ յերևում է № 1 գծագրում, ուր ձմեռը պատրաստված նմուշների կծկման արագ աճման ժամանակը յեղել է յերեք ամիս (նմուշ 2), մինչդեռ գարնանը և ամռանը պատրաստված նմուշների (Դավալուլի և պուցոլանային պ. ցեմենտներից պատրաստված նմուշները № 2' և 3'')կծկման արագ աճման ժամանակը յեղել է մեկ ամիս։ Այս տատանումների պատճառը յեղել է սենյակի ջերմաս-

ճանի մեծ փոփոխումը՝ ձմեռը + 7°C մինչև + 14°C, իսկ ամառը +20°C մինչև 35°C։

Նմուշ N1-ի /կասպիի ցեմենտ/ յերկարության փոփոխումը ոդում տաքացնելու դեպքում



Գծագիր 2

4. Ջրում պահված նմուշները յենթարկվել են անընդհատ յերկարացման, ըստ վորում տարբեր ցեմենտների յերկարացումը յեղել է՝

Կասպիի պորտլանդ ցեմենտ	. .	0,17 % (միջին)
Պուցոլանային » »	. .	0,05 % »
Դավալուի » »	. .	0,20 % »

Սրանից հետևում է, վոր պուցոլանային խառնուրդներն զգալիորեն փոքրացնում են ջրում պահված ցեմենտի նմուշի ուռչումը։

Նմուշ N 1-ի զրահապրունակության փոփոխումը։



Գծագիր 3.

5. Ոդում պահված նմուշների կծկման կորն ունի շատ թույլ արտահայտված մաքսիմում, որը կարելի է բացատրել նմուշում պարունակվող ջրի քանակության տատանումով—շրջապատի ջերմաստիճանի փոփոխման հետ կապված։

Այս բացատրությունը հիմնավորելու համար կատարված են հետևյալ փորձերը։

Զոր ոդում պահված ցեմենտի նմուշները յենթարկվել են ջերմաստիճանի փոփոխման (—21°C մինչև +75°C) այնպես, որ ոդի մուտքը թերմոստատում միանգամայն ազատ է յեղել։ Յուրաքանչյուր նմուշը վեց ժամ տևողությամբ պահվել է միևնույն ջերմաստիճանում, որը նմուշի փոքր չափումների և ցեմենտի լավ ջերմահաղորդունակության շնորհիվ կարելի է ընդունել միանգամայն բավական՝ նմուշի բոլոր մասերում միևնույն ջերմաստիճանն ստանալու համար։

Նմուշ №1-ի / դավադրի սեմենտի յերկարության փոփոխումը որում ստացվելու դեպքում



Գծագիր 4.

Հետո կատարվել են նմուշի գծային դեֆորմացիայի չափումները, վորից հետո նմուշը կշռվել է։

Վորոհետև յերկարության չափումը կատարվում էր սենյակի ջերմաստիճանի պայմաններում (t=14 C), ապա ջերմության ցրման շնորհիվ նմուշի ջերմաստիճանի անկումը կանխելու համար, նախ քան չափումը, նմուշը արագ փաթաթվում էր սովորական թղթով, իսկ չափման ժամանակամիջոցը, շնորհիվ ձեռք բերված փորձառության, հնարավոր յեղավ հասցնել մինչև 10—15 վարկյանի։

Այս կանխիկ միջոցառումների շնորհիվ կարելի յե համոզված ասել, վոր ստացված թվերը համապատասխանում են նմուշի մատնանշված ջերմաստիճանին։

Նմուշ №1-ի ջերմաչափականության փոփոխումը։



Գծագիր 5.

Փորձերից ստացվել են՝ ա) նմուշի գծային դեֆորմացիաները, սկսած —21°C մինչև +75°C, և բ) նմուշի մեջ ջրի պարունակության փոփոխումը՝ բարեխառնության մատնանշված ինտերվալում։

Արդյունքները բերված են 7—9 աղյուսակներում։ Այս տվյալ-

Աղյուսակ № 7

Նմուշների յերկարությունները (միլիմետր-ցերով) — ոդի տարբեր ջերմաստիճանի դեպքում.

Նմուշ-համար	Ցեմենտի տեսակը	—21°C	—1°C	+19,6°C	+38°C	+50°C	+75°C
1	Գասպի	96.413	96,459	96,476	96,477	96,450	96,430
2	»	96,084	96,116	96,136	96,138	96,128	96,117
1′	Դավալուի	98,506	98,536	98,553	98,547	98,523	98,475
2′	»	96 714	96,744	96,761	96,755	96,743	96.715
1″	Գուցլան	97,201	97,224	97,238	97,225	97,208	97,150
2″	«	96,959	96,986	96,933	96,980	96,963	96,905

Աղյուսակ № 8

Նմուշների կշիռները (գրամներով)—ոգի տարբեր ջերմաստիճանի դեպքում

Նմուշ. համար	Ցեմենտի տեսակը	—21°C	—1°C	+19,6°C	+38°C	+50°C	+75°C
1	Կասպիի	95,264	95,748	95,712	95,695	95,190	94,795
2	»	92,405	92,809	92,770	92,793	92,468	92,110
1′	Դավալուի	100,855	101,025	100,982	100,887	100,389	99,577
2′	»	98,345	98,589	98,545	98,475	97,973	97,193
1″	Պուցոլան	74,555	74,823	74,754	74,637	74,293	73,560
2′	»	73,770	74,172	74,095	73,970	73,502	72,865

Աղյուսակ № 9

Ոգում պահված նմուշների յուրաքանչյուր յուր կշռի աճումը տարացնելուց

Վերևի թվերը—ջերմաստիճանի աճումը՝ մմ-ով
Ներքևի » —կշռի աճումը՝ գրամներով.

Նմուշ. համար	Ցեմենտի տեսակը	—21°—1°	—21°—+19,6	—21°—+38°	—21°—+50°	—21°—+75°
1	Կասպիի	+0,046 / +0,484	+0,063 / +0,448	+0,064 / +0,431	+0,037 / +0,074	+0,017 / —0,479
2	»	+0,032 / +0,404	+0,052 / +0,365	+0,054 / +0,388	+0,042 / +0,063	+0,033 / —0,295
1′	Դավալուի	+0,030 / +0,170	+0,047 / +0,127	+0,041 / +0,032	+0,017 / —0,466	—0,031 / —1,278
2′	»	+0,030 / +0,244	+0,047 / +0,200	+0,041 / +0,130	+0,029 / —0,362	+0,001 / —1,152
1″	Պուցոլան.	+0,023 / +0,268	+0,037 / +0,199	+0,024 / +0,082	+0,007 / —0,262	—0,051 / —0,995
2″	»	+0,027 / +0,402	+0,034 / +0,325	+0,021 / +0,200	—0,004 / —0,268	—0,054 / —0,905

Նրերի հիման վրա կառուցված են ջերմության շնորհիվ նմուշի դեֆորմացիայի և խոնավության կորստի կապակցությունն արտահայտող կորերը։

AB կորերը ներկայացնում են դեֆորմացիայի փոփոխումը՝ ջերմաստիճանից կախված։ CD կորերը ներկայացնում են խոնավության կորուստը՝ ջերմաստիճանից կախված (տես 2—7 գծագրերը)։

Նուշ N1"-ի (պրուտոլ. սեմենտիկ) երկարության փոփոխումը որոշում տաքացնելու դեպքում



Գծ. 6.

AB կորն ունի պարզ արտահայտվող մաքսիմում, վորը պետք է վերագրել այն բանին, վոր ջերմաստիճանի շնորհիվ նմուշն ընդարձակվում է և ջրի պարունակությունը պակասում։ Ջերմաստիճանի շնորհիվ տեղի ունեցող ընդարձակումը, ինչպես հայտնի է, կատարվում է գծային որենքով և վորոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta l = \alpha l \, \Delta t, \quad \ldots\ldots\ldots\ldots \quad (I)$$

ուր α-ն գծային ընդարձակման գործակիցն է, վորը տարբեր յեմենտների համար տարբեր է։

α-ի մինչև արժեքն ըստ պրոֆ. Զալիգերի «Ցերկաթ բետոն» գաղընթացի, բետոնների համար կարելի է ընդունել 10^{-6}։

Նմուշ №1-ի ջրապարունակության փոփոխումը



Գծ. 7.

AB կորի որդինատներից հանելով (1) բանաձևից ստացած համապատասխան որդինատները, ստանում ենք կետեր, վորոնցով տարված նոր կոր գիծն արտահայտում է կծկման կախումը նմուշի ջրապարունակման փոփոխությունից, վորը տեղի չի ունենում տաքացման ժամանակ։

CD և EF կորերի ակնբախ նմանությունը ցույց է տալիս, վոր ջերմաստիճանի փոփոխման դեպքում ցեմենտի կծկման վրա ազդող յերկրորդ գործոնը պայմանավորվում է հենց նմուշի ջրի կորուստով։ Այս յերևույթն ընդհանուր է ցեմենտի բոլոր տեսակների համար։

Յուրաքանչյուր ցեմենտի համար գոյություն ունի վորոշակի ջերմաստիճան, վորի դեպքում ստացվում է մաքսիմալ կծկում։

Իմ կողմից փորձարկված ցեմենտների համար ստացված են հետևյալ միջին արժեքները՝

Կասպիի պորտլանդ ցեմենտ . . . . . 31°C,
Դավալուի » » . . . . . 26°C,
Պուցոլանային պորտլանդ ցեմենտ . . . 22°C։

Այստեղից հետևում է, որ պուցոլանային հավելույթները նվազեցնում են առավելագույն կծկման համապատասխանող ջերմաստիճանը։

Նման փորձեր կատարվել են նաև ջրում պահված նմուշների նկատմամբ, որոնց արդյունքները տրված են 10, 11 և 12 աղյուսակներում։

Աղյուսակ 10

Ջրում պահված ճմռուցների յերկարությունները (մմ)—ջրի տարբեր ջերմաստիճանի դեպքում.

Նմուշն. համար.	Ցեմենտի տեսակը	10°C	24°C	39°C	60°C
5	Կասպիի	96,979	96,990	97,001	97,015
6	»	96,892	96,910	96,934	96,960
4′	Դավալուի	99,116	99,145	99,170	99,190
5′	»	98,497	98,526	98,552	98,575
6′	»	98,812	98,839	98,866	98,890
4″	Պուցոլանային	97,522	97,536	97,550	97,555
5″	»	96,982	96,995	97,006	97,020
6″	»	96,970	96,980	96,992	97,005

Աղյուսակ 11

Ջրում պահված ճմռուցների կշիռները (գր) ջրի տարբեր ջերմաստիճանի դեպքում

Նմուշն. համար.	Ցեմենտի տեսակը	10°C	24°C	39°C	60°C
5	Կասպիի	64,580	64,660	64,870	65,080
6	»	62,490	62,590	62,580	62,710
4′	Դավալուի	65,730	65,790	65,870	66,100
5′	»	66,020	66,020	66,020	66,200
6′	»	67,020	67,190	67,100	67,350
4″	Պուցոլանային	45,000	45,080	45,170	45,600
5″	»	45,740	45,800	45,850	46,290
6″	»	45,090	45,260	45,270	45,760

Աղյուսակ 12

Ջրում պահված նմուշների յերկարության յեվ կշռի աճումը՝ տարացնելուց.

Վերևի թվերը—յերկարության աճումը (մմ).
Ներքևի » —կշռի աճումը (գր).

Նմուշ. համար.	Ցեմենտի տեսակը	+10°— +24°C	+10°— +39°C	+10°— +60°C
5	Կասպիի	+0,011 / +0,080	+0,022 / +0,290	+0,036 / +0,500
6	»	+0,018 / +0,100	+0,042 / +0,090	+0,068 / +0,220
